Հայ-Ռուսական համալսարանում գործող

ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության թիվ 063 խորհրդին

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Էդգար Գուրգենի Ավետիսյանի «Տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրական երաշխիքների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում)» ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 22-րդ կետի համաձայն պաշտոնական ընդդիմախոսը, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հրատարակված աշխատանքները, գնահատում է ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական դրույթների և եզրահանգումների ճշտությունը, նորությունը և հիմնավորման աստիճանը, ատենախոսության համապատասխանությունը նշված կանոնակարգի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերին:

Փորձենք այս պահանջներին համապատասխան կառուցել մեր կարծիքը Էդգար Գուրգենի Ավետիսյանի «Տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրական երաշխիքների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում)» վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են թվով 8 պարագրաֆներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Հեղինակին իրապես հաջողվել է պահպանել իրավագիտության հիմնախնդիրների լուծման արդի մեթոդաբանական մոտեցումները, մասնավորապես՝ համակարգային վերլուծության, բազմակողմանիության և այլն:

Հեղինակի կողմից արված հետազոտության նպատակը տեղեկատվության ազատության ժամանակակից բովանդակության ներկայացմամբ ու գիտական ուսումնասիրությամբ տեղեկություններ փնտրելու, ստանալու, տարածելու, ինչպես նաև հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքների իրացման շուրջ առաջացող հիմնախնդիրների վերհանումն է, իսկ որպես վերջիններիս ընդհանրացման արդյունք՝ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովումն ու պաշտպանությունն առավելագույնս երաշխավորող իրավական մոտեցումների բացահայտումը:

Հետազոտության վերոնշյալ նպատակին հասնելու համար հեղինակի կողմից առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- վեր հանել տեղեկատվության ազատության ծագումն ու զարգացումը՝ ի բացահայտումն դրա նշանակության,
- ներկայացնելով տեղեկատվության ազատության տեսաիրավական հիմքերը՝ բացահայտել՝

  ա) տեղեկատվության ազատության էությունն ու մասնահատկությունը՝ լայն և նեղ իմաստներով,

  բ) իրավունքի ապահովման կապակցությամբ պետության համար առաջացող պարտականությունների (հանրային մարմնին ուղղված պահանջների) շրջանակն ու դրանց առանձնահատկությունները,

  գ) տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի «ազատություն» և «իրավունք» ասպեկտները,

  դ) եվրոպական իրավական չափորոշիչների բնույթը,
- վերլուծել տեղեկատվության ազատության հայկական սահմանադրական նորմը՝ դիտարկելով այս իրավունքի տեղը մարդու հիմնական իրավունքների համակարգում, համեմատելով դրա հետ կապվող այլ իրավունքները և ներկայացնելով դրա հնարավոր տեսակները (ընդհանուր

տեղեկատվության ազատություն և հատուկ տեղեկատվության ազատություն),

- պարզել ընդհանուր տեղեկություններ փնտրելու, ստանալու ու տարածելու ազատությունների ապահովման սահմանադրաիրավական երաշխիքները, պաշտպանության շրջանակը, անդրադառնալ դրա բաղադրիչներ հանդիսացող մասնավոր և հանրային լրատվական միջոցների ազատությունների ներպետական ու եվրոպական իրավական երաշխիքներին՝ ընդգծելով դրանց ապահովման ճանապարհին ձևավորված հիմնախնդիրները,
- ներկայացնել ընդհանուր տեղեկատվության ազատության պաշտպանության համար հնարավոր վտանգ ներկայացնող ժամանակակից իրավունքներից՝ մոռացված լինելու իրավունքը և բացահայտել դրա ու քննարկվող իրավունքի մրցակցությունը,
- եվրոպական և միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում քննարկել հատուկ (հանրային մարմինների մոտ գտնվող) տեղեկատվության ազատության ինքնահատկությունը՝ վեր հանելով դրա դրսևորումներ հանդիսացող հանրային մարմիններից տեղեկություն ստանալու ու տեղեկացված լինելու իրավունքների ապահովման հիմնախնդիրները,
- հետազոտել մասնավոր մարմինների մոտ գտնվող տեղեկություններն ստանալու իրավունքը ու դրա շրջանակում վեր հանել մասնավոր մարմինների՝ տեղեկություն տրամադրելու հնարավոր պարտականությունների շրջանակը:

Գրախոսվող աշխատանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը հասել է իր առջև դրված գիտական նպատակներին: Այսպես, ատենախոսը մանրամասն վերլուծել է տեղեկատվության ազատության ինստիտուտը, վերլուծել տեղեկատվության ազատության և կարծիքի արտահայտման հարաբերակցությունը, տվել է ընդհանուր տեղեկատվական ազատություն և հատուկ տեղեկատվական ազատություն հասկացությունները:

Հեղինակը ուսումնասիրել է ՀՀ-ում ընդհանուր տեղեկատվության ազատության պաշտպանության շրջանակն ու եվրոպական իրավական չափորոշիչները:

Բացահայտել մոռացվելու իրավունքի էությունը:

Պաշտպանության ներկայացված ատենախոսության թեմայի արդիականությունն հիմնավորելիս հեղինակը նշում է, տեղեկությունը մարդու ամենօրյա անհրաժեշտություններից մեկն է, առանց որի դժվար, նույնիսկ անհնար կլինի առօրյա որոշ պահանջմունքների բավարարումը: Միաժամանակ, առատ տեղեկությունների այնպիսի ժամանակաշրջանն, ինչպիսին այս է, առաջ է քաշում տեղեկությունների ազատ շրջանառման՝ փնտրելու, ստանալու ու տարածելու հարաբերությունների իրավական համաժամանակյա ուսումնասիրման ու գնահատման ուղիղ հրամայական:

Հեղինակը թեմայի արդիականությունը պայմանավորել է նաև այն հանգամանքով, որ 2015 թվականին խմբագրված ՀՀ Սահմանադրությունում տեղեկատվության ազատությունը ներառվել է կարծիքի արտահայտման ազատության մեջ (հոդված 42): Հեղինակի համոզմամբ սահմանադրի այս մոտեցումը եզակիներից է, հատկապես, որ ընդունված չէ ատենախոսությամբ հետազոտված միջազգային պայմանագրերում կամ տարբեր պետությունների մայր օրենքներում:

Հեղինակը կարողացել է գիտական պատշաճ մակարդակով ներկայացնել տրամաբանական դատողություններ, որոնք աշխատանքը դարձնում են դյուրընթեռնելի: Աշխատանքում ներկայացված համեմատական վերլուծություններն այն դարձնում են առավել համոզիչ: Աշխատանքը տպավորիչ է նաև միջազգային փորձի բազմակողմանի և խորը ուսումնասիրության տեսանկյունից: Հեղինակը կարողացել է հստակ և համակարգված ներկայացնել բազմաթիվ երկրների՝ ՌԴ-ի, Վրաստանի Հանրապետության, Ադրբեջանական Հանրապետության, Թուրքիայի, Ուկրաինայի Հանրապետության, Բուլղարիայի Հանրապետության, Սերբիայի Հանրապետության, Ալբանիայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության, Իսպանիայի Թագավորության և այլ պետությունների և ՀՀ սահմանադրություններում տեղեկատվության ազատության ապահովման ինստիտուտին առնչվող նորմերը:

Հեղինակի կողմից մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել դատական նախաղեպային պրակտիկան: Ուսումնասիրվել են ՀՀ Վճռաբեկ դատարանի, ՀՀ

Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի և նույնիսկ Եվրոպական միության արդարադատության եվրոպական դատարանի տեղեկատվության ազատության ապահովման ինստիտուտին առնչվող ակտերը և արվել է ակտերի ինքնուրույն վերլուծություն և մեկնաբանություն:

Գիտական աստիճանի հայցման համար ներկայացված աշխատանքի գնահատման հաջորդ որակական պահանջը ատենախոսության եզրահանգումների և պաշտպանության ներկայացված դրույթների նորությունն է:

Գիտական հիմնավորումը տրամաբանության տեսանկյունից որևէ դրույթի ճշմարտացիության օգտին փաստերի և փաստարկների ներկայացումն է: Այս տեսանկյունից պետք է նկատել, որ ատենախոսության բոլոր եզրահանգումների հիմքում ընկած են հստակ աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքեր:

Աշխատանքի արժանիքներից է նաև այն հանգամանքը, որ հեղինակը ոչ միայն պատշաճ մակարդակով հիմնավորել է հետազոտության գիտական նորույթները, այլ նաև եկել է տրամաբանական եզրահանգումների:

Աշխատանքը արժեքավոր է նաև նրանով, որ այս աշխատանքը տեղեկատվության ազատության ապահովման համընդգրկուն հետազոտության առաջին փորձն է:

Ներկայացված գիտական հետազոտության դրական կողմերից է նաև այն հանգամանքը, որ հեղինակը հետազոտության յուրաքանչյուր հատվածն ամփոփում է հստակ հետևություններով և եզրակացություններով՝ կատարելով ճիշտ շեշտադրումներ:

Ընդհանուր առմամբ աշխատանքն ավարտուն, ամբողջական հետազոտություն է: Գիտական պատշաճ մակարդակով ներկայացված են տրամաբանական դատողություններ և հետևություններ: Այդուհանդերձ, աշխատանքում տեղ են գտել որոշ թերացումներ: Մասնավորապես, ցանկանում ենք մատնանշել հետևյալները.

1. Հեղինակն ատենախոսության 1.3 ենթագլխում անդրադարձել է տեղեկատվության ազատության և կարծիքի արտահայտման ազատության հարաբերակցությանը: Կարծում ենք, որ ատենախոսական աշխատանքն ավելի

կշահեր, եթե հեղինակը անդրադառնար նաև տեղեկատվության ազատության իրավունքի և այլ իրավունքների հարաբերակցությանը, մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության, ստեղծագործության ազատության և այլն:

2. Ատենախոսական աշխատանքի 73-րդ էջում Հեղինակը գրում է. «Համաձայնվելով Անդրեասյանի առաջարկի հետ՝ մենք ևս կարծում ենք, որ գրաքննության արգելքը պետք է ամրագրվի բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտով, չպետք է այն նախատեսել հասարակ օրենքում և կախման մեջ դնել օրենսդիր մարմնից: Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սահմանադրության 42-րդ հոդվածի «առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության» ձևակերպումն իր մեջ, ընդհանուր առմամբ, ներառում է գրաքննության արգելքը:»

Գտնում ենք, որ ատենախոսի նման մտահանգումը պարունակում է հակասություն, քանի որ վերջինս մի կողմից նշում է, որ գրաքննության արգելքը պետք է օրենքից բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտով, այսինքն՝ Սահմանադրությամբ նախատեսվի, մյուս կողմից նշում՝ Սահմանադրության կոնկրետ ձևակերպում իր մեջ ներառում է գրաքննության արգելը:

3. Ատենախոսության «Եզրակացություն» բաժնի 6-րդ կետում Հեղինակը նշել է. «Ամբողջացնելով հատուկ տեղեկատվության ազատության սահմանափակման հիմքերի վերաբերյալ անդրադարձը՝ մատնանշեցինք տեղեկության տրամադրման չպատճառաբանված մերժումներով (դրանց առկայությունն են վկայում մի շարք դատական գործեր) անձի տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի անհիմն խախտումը: Վերջինիս որոշակի լուծումը համարեցինք տեղեկությունների տրամադրումը մերժելու որոշումների պատճառաբանության բարձրացման օրենսդրական պահանջ նախատեսելը:»:

Նման եզրահանգմամբ, ըստ էության, Հեղինակը ցանկացել է լրացուցիչ պարտավորություն նախատեսել հանրային մարմինների վրա: Կարծում ենք՝ այդքան էլ արդարացված չէ հեղինակի նշված առաջարկը, քանի որ հանրային մարմինները ցանկացած պարագայում են պարտավոր կայացնել օրենքով նախատեսված որոշում: Այլ խոսքով՝ միայն տեղեկությունների տրամադրումը մերժելու որոշումներին

պատճառաբանվածության ավելի բարձր շեմ նախատեսելով վտանգի և կասկածի տակ կարող է դրվել հանրային մարմինների այլ որոշումների պատճառաբանվածության աստիճանը, ինչը հիմնավոր չէ:

Նշված նկատառումները, սակայն, էական չեն, ունեն ոչ սկզբունքային նշանակություն և չեն նսեմացնում ատենախոսության ակնառու արժանիքները: Դրանք առավելապես ցանկություններ են, որոնք, հուսով ենք, հեղինակը հաշվի կառնի իր հետագա հետազոտությունների ժամանակ:

Էդգար Գուրգենի Ավետիսյանի «Տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրական երաշխիքների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակը ցուցաբերել է հիմնահարցի լավ իմացություն, ինքնատիպություն, ներկայացրել է պատշաճ գիտական մակարդակով գրված և գործնական զգալի նշանակություն ունեցող աշխատանք և արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Հեղինակի հրատարակած գիտական հանդեսներում տպագրված հոդվածները, ատենախոսությանը վերաբերող թեմաներով գիտական զեկուցումներն արտացոլում են աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացված հիմնադրույթները: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Էդգար Գուրգենի Ավետիսյանի «Տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրական երաշխիքների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 8-րդ կետի թեկնածուական ատենախոսության համար սահմանված

պահանջներին: Հայաստանյան իրավագիտության մեջ առաջին անգամ ամբողջական, համակարգված հետազոտության են ենթարկվել տեղեկատվության ազատության ապահովման ինստիտուտը, հեղինակը անդրադարձել է տեղեկատվության ազատության ապահովման և պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրներին:

Հետազոտությունը կարելի է գնահատել որպես նոր խոսք գիտության մեջ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ: Հեղինակը՝ Էդգար Գուրգենի Ավետիսյանը արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի օգնական, Վ. Պողոսյան
Հայաստանի Եվրոպական համալսարանի դասախոս, ի.գ.թ.,

Վ. Ռ. Պողոսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ Սահմանադրական դատարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ս. Առաքելյան